Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի ԹԻՎ 216-Ա, ՄԱՐՏԻ 25-Ի ԹԻՎ ԹԻՎ 218-Ա-222-Ա, ՄԱՐՏԻ 28-Ի ԹԻՎ ԹԻՎ 223-Ա-225-Ա, ՄԱՐՏԻ 30-Ի ԹԻՎ ԹԻՎ 226-Ա-230-Ա, 232-Ա-234-Ա ԵՎ ՄԱՐՏԻ 31-Ի ԹԻՎ ԹԻՎ 235-Ա-238-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 216-Ա որոշման վերնագիրը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթին, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտի վերնագրում բերվում է միայն փոփոխվող կամ գործողությունը դադարեցվող իրավական ակտի կրճատ անվանումը:

Որոշման նախաբանում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասին կատարված հղումը սխալ է, քանի որ նշված իրավական ակտով համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման եռամսյակային համամասնություններ չի սահմանել: Բացի այդ, ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու որոշմանը կատարված հղումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթներին, համաձայն որի՝ նորմատիվ իրավական այլ ակտի հղումներ կատարելիս կարող է նշվել իրավական ակտի կրճատ անվանումը:

Որոշմամբ հաստատված հավելվածի 5-րդ կետում գրառված «10928.0» թիվը փոխարինել «109280.0» թվով:

Թիվ 218-Ա որոշման նախաբանում «հաստատված» բառը փոխարինել «սահմանված» բառով: Բացի այդ, որոշման բովանդակության մեջ տրամադրված հասցեն չի համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետին:

Թիվ թիվ 219-Ա և 220-Ա որոշումների նախաբաններում անհրաժեշտ էր հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին: Որոշումների 4-րդ կետերը չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջին, համաձայն որի՝ անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը:

Թիվ 220-Ա որոշման 1-ին կետում անշարժ գույքի հասցեն չի համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետին:

Թիվ 221-Ա որոշման նախաբանում հղումները չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջին, համաձայն որի՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, ակտի վերնագիրը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը:

Որոշման նախաբանում անհրաժեշտ էր հղում կատարել ոչ թե ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N1180-Ն որոշմանը, այլ՝ որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 30-րդ կետին, 33-րդ կետի 4-րդ ենթակետին և 34-րդ կետին: Բացի այդ, որոշման նախաբանում անհրաժեշտ էր հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին:

Որոշման նախաբանի վերջում «նպատակով» բառից հետո անհրաժեշտ է գրառել «որոշում եմ» բառերը:

Որոշման վերնագրում և դրույթներում համայնքի անվանումը գրառված է անորոշ և թերի, դրույթների համարակալումը սխալ է կատարված:

Որոշմամբ չի հաստատվել տարահանման հանձնաժողովի կազմը: Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով ստեղծված և հավելվածի տեսքով ներկայացված են կազմավորումներն ու անձնակազմերը, սակայն որոշման մեկ այլ կետով տարահանման հանձնաժողովի նախագահին հանձնարարվում է կազմավորումները համալրել անձնակազմերով:

Որոշման 3-րդ կետում «համայնքապետարանի» բառից հետո անհրաժեշտ էր գրառել «աշխատակազմի» բառը: Բացի այդ, անհրաժեշտ էր ընդունել առանձին իրավական ակտեր՝ համայնքում տարահանման հանձնաժողով և քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ ստեղծելու մասին:

Որոշման մեջ չի պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված վավերապայմանները, այսինքն՝ անհրաժեշտ էր նշել ստորագրող պաշտոնատար անձի ստորագրման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը:

Թիվ 222-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում «նախագահ» բառը փոխարինել «նախագահի տեղակալ» բառերով, իսկ 5-րդ ենթակետում «բանվոր» բառից հետո գրառել «հանձնաժողովի անդամ» բառերը:

Թիվ 223-Ա որոշման վերնագրում անհրաժեշտ էր գրառել գործուղվող անձի անուն ազգանունը:

Որոշման նախաբանում հղումը թերի է կատարված: Անհրաժեշտ էր հղում կատարել նաև ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման 1-ին կետի «ա)» ենթակետով հաստատված N 1 հավելվածի 2-րդ, 3-րդ, 7-րդ և 21-րդ կետերին:

Թիվ 224-Ա որոշման վերնագիրը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի, իսկ որոշման 1-ին կետը՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի դրույթներին:

Թիվ 225-Ա որոշման վերնագրում և բովանդակության մեջ չի պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջը:

Թիվ թիվ 226-Ա և 227-Ա որոշումների բովանդակությունների մեջ տրամադրված հասցեները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետին:

Թիվ 228-Ա որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներին:

Թիվ թիվ 229-Ա և 230-Ա որոշումների նախաբաններում անհրաժեշտ էր հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին: Բացի այդ, «նպատակով» բառից հետո անհրաժեշտ է գրառել «որոշում եմ» բառերը: Որոշումների դրույթներում համայնքի անվանումը թերի է գրառված:

Թիվ 232-Ա որոշման վերնագրում և բովանդակության մեջ չեն պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջը:

Թիվ թիվ 233-Ա, 236-Ա և 237-Ա որոշումների վերնագրերն անհրաժեշտ է համապատասխանեցնել որոշումների 1-ին կետերին և ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետին: Բացի այդ, թիվ թիվ 233-Ա և 236-Ա որոշումների դրույթներում համայնքի անվանումը թերի է գրառված:

Թիվ թիվ 234-Ա և 235-Ա որոշումների նախաբաններում «հաստատված» բառը փոխարինել «սահմանված» բառով: Բացի այդ, որոշումների բովանդակությունների մեջ տրամադրված հասցեները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետին:

Թիվ 238-Ա որոշման դրույթների համարակալումը սխալ է կատարված: Որոշմամբ հասցեի փոփոխություն չի կատարվել:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
02.05.2022թ.